**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 22-ը» հունվարի 2018թ.
ժամը 11[20]

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բադալյան:
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Ախտահանման կենտրոն» ՓԲԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին,

*ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:*

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակցի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջինիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակից և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՋ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Ս. Աբովյան |
| Գնահատող | Մ. Խալաթյան |
| Գնահատող | Ա. Մաղաքյան |
| Գնահատող | Հ. Բադալյան |
| Գնումները համակարգող՝ | Ռ. Մարդոյան |

**22.01.2018թ.**